

մէջ. իւր հակառակորդներէն եւ Մեղքիսեղեկ կաթողիկոսէն կրած անդադար յարձակումներու առջեւ տեղի տալով հեռացաւ Սիւնիքէն «եւ բազում աշակերտօք գնացեալ յԱյրարատեանն դաւառ» եւ զետեղուեցաւ Երեւան. հոս շնորհիւ Ամիրզոհնայի ցոյց տուած պաշտպանութեան, բացաւ միւսանգամ հողեւոր դպրանոց մը Ս. Անանիայի դամբանին վրայ. ուր հաւաքուեցան իր շուրջը խումբ մը աշակերտներու. Եսայի Կարճաւանցի կը գրէր. «Ժողովեալ բազում աշակերտս եւ կրօնաւորս եւ միայնակեացս եւ կարգեաց դպրոցս. այլ եւ բազում կարգս եւ կրօնս հաստատեաց» (էջ 98): Նոյն իմաստով կը գրէր նաեւ Դաւրիժեցի (295), թէ «առ որ ժողովեցան միաբանք բազումք, միայնակեացք եւ գրոց աշակերտք իմաստունք եւ սրբակեացք. կային ի միասին մեծք եւ փոքերք, սիրով հանդարտացեալք ի խցի, հանապազօր կանխեալ յողթս եւ յընթերցումս սուրբ գրոց»:

Իեւո նոր էր աւարտած Մեղքիսեղեկ Վժանցի ի Լիմ առ ոտս Ներսէս Մոկացւոյ իւր ուսման ընթացքը, երբ հռչակուեցաւ հայաբնակ վայրեր Մովսէս կաթողիկոսի ձեռնարկութիւններու՝ իջմիածնի վերանորոգութեան, դպրատուններու բացման եւ հայրապետական աթոռի վրայ յաջորդութեան համբաւը. «առ որ ամենեքեան տենչացեալ գային ի տեսութիւն նոցին»: Եկաւ նաեւ Մեղքիսեղեկ եւ «հանդիպեցաւ տեսութեան Մովսէս